Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[1] Դուրս գրման ամսաթիվ		
10	Դեկտեմբեր	2018 թ.
[4] Մատակարարման ամսաթիվ		
10	Դեկտեմբեր	2018 թ.

[2] Սերիա	[3] Համար
Ա	9303213806

Ճշգրտվող հաշվի

Սերիա	Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն:
	Լիազորագիր — Համար:
	Լիազորագիր — Ամսաթիվ:

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	37101318 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
(անունը, ազգանունը)

Ստացող
պաշտոնը, ստորագրությունը (անունը, ազգանունը)
պաշտոնը, ստորագրությունը (անունը, ազգանունը)

10/12/2018 15:23:39

ՈՐՈՇՈՒՄ

հետմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

07 սեպտեմբերի, 2018թ. ք. Եղեգնաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա. Գևորգյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 37101318 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2018թ. հունիսի 15-ին՝ ժամը 15:55-ին, <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից հաղորդում է ստացվել, որ կանչով մեկնել են Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայր, որտեղ արձանագրվել է նույն բնակավայրի բնակիչ Ֆրունզ Ղազարյանի մահը:

Դեպքի կապակցությամբ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ 2018թ. հունիսի 15-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, Ֆրունզ Ղազարյանը Աղավնաձոր գյուղի իրենց տան բակում իրեն պատկանող թիվ 361-60 համարի, <<ՏՈՋ>> տեսակի 16 տրամաչափի երկփողանի որսորդական ողորկափող հրացանից կրակ է արձակել իր որովայնին և ստացած հրազենային վնասվածքից մահացել է:

2018թ. հունիսի 21-ի ՀՀ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Ֆրունզ Ղազարյանը ընտանիքի հետ համատեղ բնակվել է Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում, կենդանության օրոք տառապել է <<Սրտային անբավարարություն>> հիվանդությամբ, ունեցել է նաև թոքերի հետ կապված խնդիր, 2017թ. հոկտեմբեր ամսից պարբերաբար բուժումներ է ստացել տարբեր բժշկական կենտրոններում, վերջին անգամ ստացիոնար բուժում է ստացել 2018թ. մայիսի 7-ից 17-ն ընկած ժամանակահատվածում, ապար դուրս է գրվել, իրեն լավ է զգացել: Ֆրունզ Ղազարյանը հաճախակի է գանգատվել իր վիճակից, ասել է, որ կյանքին վերջ պետք է տա՝ ինքն իրեն կրակելու է: 2018թ. հունիսի 15-ին Ֆրունզ Ղազարյանը եղել է անտրամադիր, տանից չի բացակայել, հաց չի կերել, ժամը 14-ին ընտանիքի անդամները եղել են տանը, երբ բակից լսվել է հրազենի կրակոց, ընտանիքի անդամները դուրս գալով տեսել են Ֆրունզ Ղազարյանին տան մոտ մեջքի վրա ընկած վիճակում, նրա մոտ նկատել են Ֆրունզ Ղազարյանին պատկանող թիվ 361-60 համարի, <<ՏՈՋ>> տեսակի 16 տրամաչափի երկփողանի որսորդական ողորկափող հրացանը, որով վերջինս կյանքին վերջ տալու նպատակով կրակ է արձակել իր որովայնին: Ֆրունզ Ղազարյանը եղել է ողջ, նույն պահին պառկած տեղից նստել է, ձայն չի հանել, նրա գլխի տակ բարձ են դրել, Ֆրունզ Ղազարյանը ձախ կողմով հենվել է բարձի վրա, սակայն 20 րոպե անց ստացած հրազենային վնասվածքից մահացել է:

Քրեական գործի նախաքննության ընթացքում Ֆրունզ Ղազարյանի ընտանիքի անդամները, ազգականները և հարևանները նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել այն մասին, որ Ֆրունզ Ղազարյանի ինքնասպանության պատճառը եղել է կենդանության օրոք վերջին տարիներին նրա մոտ հայտնաբերված հիվանդություններն ու ամենօրյա անհրաժեշտ բժշկական միջամտությունները, ինչի հետևանքով վերջինս չի կարողացել զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով և հասնելով հոգեճնշող վիճակի բողոքվել է կյանքից և իր վիճակից, ասել է, որ <<Իր կյանքին վերջ է տալու, ինքն իրեն կրակելու է>> չնայած դրան, իրենք չեն հավատացել, որ նա կարող է նման բան անել: Վերջիններս նաև նշել են, որ մահվան նախորդող օրերին Ֆրունզ Ղազարյանը եղել է շատ անտրամադիր, ընկճված վիճակում, դեպքից առաջ հրաժարվել է անգամ իր սովորության համաձայն սուրճ խմել:

Բացի այդ ինքնասպանություն գործելուց առաջ Ֆրունզ Ղազարյանը երկտող է թողել, որում մասնավորապես նշել է. <<Իմ շունչս կտրվում էր, ես չէի կարողանում շնչել, որդիս տեսնելով վիճակս, սկսեց բժշկի տանել, որպեսզի ես առողջանամ, սակայն բախտս չբերեց, որը տևեց մոտ տարուց ավել, նա 2 միլիոնից ավել փող ծախսեց՝ տալով բժիշկներին, սակայն անարդյունք, որից ես զզվեցի, չկարողանալով գոնե զուգարան գնալ, ստիպված ինքնասպանություն գործեցի, մեղավորներ չկան, մեղավորները բժիշկներն են>>: Քննությամբ պարզվել է, որ այն հարցը, թե բժիշկներն են մեղավոր, ուղղված է եղել ոչ թե կոնկրետ բշժշկի կամ բժիշկների, այլ առհասարակ բժշկությանը, որի առնչությամբ նրա մոտ եղել է անհավատություն, դա է վկայում նաև նրա ամբուլատոր բժշկական քարտում առկա 01.06.2018թ. գրառումը, որ նա զգացմունքային է, վարքագծային կարգավիճակը՝ անհավատություն բժշկության հանպեպ, նյարդային գրգռվածություն:

2018թ. օգոստոսի 22-ին քրեական գործը գրավոր պահանջի համաձայն ուղարկվել է Վայոց Ձորի մարզի դատախազություն:

Ուսումնասիրելով քրեական գործի նյութերը՝ Վայոց Ձորի մարզի դատախազության դատախազ Կ. Կարապետյանը ցուցում է տվել նշանակել հետմահու դատահոգեբանական փորձաքննություն՝ պարզելու համար՝ Ֆրունզ Ղազարյանն ինքնասպանություն կատարելուց առաջ ինչպիսի հոգեվիճակում է գտնվել, որ անհատական-հոգեբանական առանձնահատկությունները կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակում նրա վարքի վրա:

Ֆրունզ Ղազարյանի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, հոգեվիճակը ինքնասպանություն կատարելուց առաջ, այդ հոգեվիճակում գտնվելով պայմանավորված ինքնասպանություն գործելու հանգամանքը պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով << քր. դատ. օր.-ի 55, 243 – 245 և 248-րդ հոդածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Վարույթում քննվող թիվ 37101318 քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն:
2. Փորձագետների պարզաբանմանը առաջադրել հետևյալ հարցը.

-պարզել Ֆրունզ Ղազարյանի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, դրանց ներգործությունը նրա վարքի վրա,

- պարզել Ֆրունզ Ղազարյանի հոգեվիճակը ինքնասպանություն կատարելուց առաջ, այդ հոգեվիճակում գտնվելով պայմանավորված նրա կողմից ինքնասպանություն գործելու հանգամանքը,

3. Փորձագետին իրավունք վերապահել պատասխանել նաև այն հարցերին, որոնք սույն որոշման մեջ նշված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, դրանց պարզաբանումը կմտնի փորձագետի իրավասության մեջ, որոնց պարզաբանումը կարող է էական նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Փորձագետներին պարզաբանել իրենց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քր. օր.-ի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին և դրա վերաբերյալ ստորագրությունը կցել եզրակացությանը:

Վայոց ձորի մարզային քննչական
վարչության ՀԿԳ ավագ քննիչ՝ Ա. Գևորգյան